ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2

ք. Վանաձոր

«27» հունիսի 2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այպոշին» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Հ.Պողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման, Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման, Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման և Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների համար՝ 2017 թվականի օգոստոսի 31-ը, Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքների համար՝ 2017 թվականի դեկտեմբերի 1-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 5.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 5): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 23221247 (քսաներեք միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր քառասուն յոթ) ՀՀ դրամ, որից 3843208 (երեք միլիոն ութ հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր ութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝
2-րդ չափաբաժին 4710389 (չորս միլիոն յոթ հարյուր տաս հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ՝ որից 785065 (յոթ հարյուր ութսունիհինգ հազար վաթսունիհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն;
7-րդ չափաբաժին 5143865 (հինգ միլիոն հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր վաթսունիհինգ) ՀՀ դրամ՝ որից 857311 (ութ հարյուր հիսունյոթ հազար երեք հարյուր տասնմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն;
8-րդ չափաբաժին 13366993 (տասներեք միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որից 2227832 (երկու միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 5 և N 5.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան	«Այպոշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06933045
ՀՀ 900231751026	Հ/Հ 2050222017141001
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ
Ն. Սարգսյան	Հ.Պողոսյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-1

Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքների կատարման

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		էլեկտրալուսավորման աշխատանքներ				
1	8-364-1	Բարձակ /կռանշտեյն/ Φ 32x2.5մմ երկ. L = 1.7 պող. խողովակից 1.7 x 0.64 =1.088	հատ	43	2.88	123.92
2	շուկա	թերթավոր պողպատ 3մմ հաստ. թերթից D=175մմ	կգ	1.20	0.52	0.63
3	շուկա	թերթավոր պողպատ 6մմ հաստ. թերթից	կգ	2.40	0.53	1.27
4	շուկա	մեկուսիչի պողպատե ցցածողերի տեղադրում Φ16	կգ	26.2	0.55	14.51
5	շուկա	Մեկուսիչ ՏՖ -20	հատ	43	0.42	18.00
6	շուկա	պողպատե ձող Φ16.մմ	կգ	78.40	0.55	43.43
7	8-364-1	Տրավերս պողպատե անկյունակից L 40x40x4 երկ.0.8 մ 0.906x 0.8=0.725	հատ	45	2.38	106.92
8	11-630-6	Ժամանակի ռելե 220վ 16Ա	հատ	2	9.63	19.26
9	8-531-2	մագնիսական թողարկիչ 220Վ 25Ա ՊՄԼ 2110	հատ	2	10.42	20.85
10	8-619-4	նատրիումային լամպով փողոցային կոնսոլային լուսատու ,, ЖКУ,, մակնիշի	հատ	43	26.44	1136.98
11	Շուկա	գազանատրիումային Լամպ ,,ԴՆԱՏ,, մակնիշի 75վտ	հատ	43	3.07	132.05
12	8-150-4	Մալուխի տեղադրում ԱՎՎԳ 2x16մմ2	մ	935.0	0.93	870.25
13	8-150-4	Մալուխի տեղադրում ԱՎՎԳ 2x10մմ2	մ	566.0	0.79	448.26
14	8-150-4	Մալուխի տեղադրում ԱՎՎԳ 2x2.5մմ2	մ	72.0	0.54	38.59
15	8-402-2	Հաղորդալար ալյումինե ջիղերով ԱՊՎ 1x2.5 մմ^2	մ	228.0	0.20	44.46
16	շուկա	պողպատե ճոպան Φ 6.1մմ	մ	130.0	0.33	43.24
17	շուկա	մետաղաճոպանի ամրակ	հատ	260	0.01	2.49
18	8-525-1	միաբևեռ ավտոմատ անջատիչ 16Ա	հատ	2	1.28	2.56
19	շուկա	մետաղաան արկղ կառավարման վահանակի համար	հատ	2	13.96	27.91
20	8-613-2	եռաֆազ էլ. հաշվիչ երկսակագնային 380վ 40Ա	հատ	2	30.14	60.28
		Շինարարական աշխատանքներ				
1	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով փոսերում	մ^3	15.48	4.14	64.08
2	Շուկա	Հենասյուների բետոն B 7.5 մ.բ.	մ^3	15.48	35.23	545.41
3	1-968	բնահողի փռում ձեռքով տեղում	մ^3	15.48	0.98	15.19
4	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ108x4 , L = 7.5մ	տն	3.3088	100.30	331.86
5	Շուկա	Պողպատե խողովակ Φ102x3	մ	322.5	3.48	1120.80
6	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ216x6 , L = 1.4մ	տն	0.0882	100.29	8.85
7	Շուկա	Պողպատե խողովակ Φ216x6	մ	2.8	15.06	42.17
8	9-33	Պողպատե հենասյան մոնտաժում Φ159x4.5 , L = 9մ	տն	0.3207	100.29	32.16
9	Շուկա	Պողպատե խողովակ Φ159x4.5	մ	18.0	8.16	146.97
10	11-11	բետոնե նախաշերտ. B 7.5 բետոնով	մ^3	0.242	38.69	9.36
11	6-2	Բետոնե հիմքերի կառուցում հենասյուների տակ B 7.5 մ.բ	մ^3	1.12	53.08	59.45
12	շուկա	ամրան Ա-3 Φ10,14.մմ	կգ	19.40	0.55	10.75

13	15-614	Մետաղական հենասյուների յուղաներկում 2 անգամ մոխրագույն ներկով	100մ^2	1.137	109.33	124.31
		Ընդամենը				5667.19
		Շահույթ 11%				*623.39*
		Ընդամենը				*6290.58*
		ԱԱՀ 20%				*1258.12*
		Ընդամենը				*7548.70*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-2

Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների կատարման

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		քանդման աշխատանքներ				
1	46-124	Փայտից դռների ապամոնտաժում	100մ^2	0.2402	126.31	30.34
2	46-122	Փայտե պատուհանների ապամոնտաժումպատու-հանագոգերի հետ միասին	100մ^2	0.2844	216.01	61.43
3	46-102	փայտյա հատակների քանդում	100մ^2	0.964	44.22	42.62
4	14-320 գ-0.5	պատերի մաքրում ջրադիսպերսիոն	100մ^2	2.5628	8.41	21.54
5	14-320 գ-0.5	շեպերի մաքրում ջրադիսպերսիոն	100մ^2	0.2763	8.41	2.32
6	14-320 գ-0.5	պատերի մաքրում յուղաներկից	100մ^2	1.1725	8.41	9.86
7	14-320 գ-0.5	առաստաղի մաքրում ջրադիսպերսիոն ներկից	100մ^2	2.2256	9.22	20.52
		Միջնորմներ			0.00	0.00
1	8-140	միջնորմների կառուցում թեթև բետոնե բլոկներով n=20սմ	մ^3	1.56	23.92	37.31
2	8-140	միջնորմների կառուցում թեթև բետոնե սալերից n=10սմ	մ^3	1.57	30.36	47.67
		Բացվածքներ				
1	10-107	ՄԴՖ-ից ներքին դռների տեղադրում	մ^2	9.80	4.23	41.45
2	շուկա	ՄԴՖ-ից ներքին դռների արժեքը	մ^2	9.80	34.82	341.28
3	շուկա	ներքին մետաղապլաստե դռների տեղադրում 60մմ հաստ. /հայկական պրոֆիլ/	մ^2	4.41	37.81	166.75
4	շուկա	մետաղապլաստե ապակեպատ դռների տեղադրում 60մմ հաստ. 1 տակ ապակով /արտերկիր/	մ^2	3.24	37.81	122.51
5	շուկա	Մետաղապլաստե ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում 60մմ հաստ./հայկական պրոֆիլը/	մ^2	28.44	27.69	787.64
6	7-84	պատուհանագոգերի տեղադրում	100մ^2	0.2844	80.07	22.77
7	շուկա	պլաստմասե պատուհանագոգերի արժեքը 300մմ լայն.	մ	17.2	3.56	61.24
		Հատակներ				
1	5-81	ջերմամեկուսիչ շերտի իրականացում լեռնային ավազով 570մմ հաստ.	մ^3	57.800	8.99	519.90
2	1-1184	ավազի շերտի տոփանում 100մմ հաստ. շերտերով	100մ^3	0.578	23.51	13.59
3	1-1186	ավազի շերտերի ջրում	100մ^3	0.578	27.89	16.12
4	11-11	բետոնե նախաշերտի կառուցում B 7.5 մ.բ.	մ^3	6.900	38.62	266.45
5	5-115	հատակների կառուցում կերամիկական սալիկներից	մ^2	16.0	7.46	119.40
6	11-135	շրիշակների կառուցում կերամիկական սալիկներից 60մմ բարձր.	100մ^2	0.011	666.00	7.33
7	5-119	Հատակի կառուցում լամինատից շրիշակով ,սպունգով 7մմ հաստ/	մ^2	106.26	5.35	568.80
		Տանիք				
1	46--98	Ալիքավոր ա/ց թերթերից կտուրի քանդում	100մ^2	1.00	21.42	21.42
2	8-300 գ-0,2	կավարամածի փայտանյութի ապամոնտում	մ^3	1.00	6.59	6.59
3	8-14-B	Կավարամածի կառուցում	մ^2	1.0	0.32	0.32

4	շուկա	կավարամածի փայտանյութ	մ^3	0.640	212.81	136.20
5	9-24 4-1	Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով ԿՊ-25-0,55մմ	մ^2	100.0	4.08	408.12
6	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	1մ^2 մշակ մակ.	100.0	0.17	17.07
		Ներքին հարդարում				
1	11-64	առաստաղի սվաղի վերանորոգում գաջե շաղախով	մ^2	18.0	2.93	52.76
2	11-178	պատերի սվաղում գաջի շաղախով	մ^2	38.74	1.73	66.89
3	11-57	Պատերի սվաղի վերանո-ռուգում գաջե շաղախով	100մ^2	0.55	255.05	140.28
4	14-418	պատերի և շեպերի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ^2	2.925	92.68	271.09
5	14-419	առաստաղի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով	100մ^2	1.30	105.34	136.94
6	11-73	շեփերի սվաղի վերանորոգում գաջի շաղախով	մ^2	8.30	4.65	38.63
		Ներքին ջուր				
1	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ^3	3.0	2.39	7.16
2	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	3.0	0.96	2.87
3	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազով 100մմ	մ^3	0.30	4.30	1.29
4	22-397	Միացում գոյություն ունեցող ցանցին Φ25մմ խողովակով	հատ	1	2.63	2.63
5	22-446	Հավաքովի ե/բ դիտահորի տեղադրում Φ1500 h=1.5մ	մ^3	1.40	33.56	46.99
6	Շուկա	Հավաքովի ե/բ դիտահորի օղակներ 1500x500	հատ	3	38.89	116.66
7	Շուկա	Հավաքովի ե/բ կափարիչ 1800x1800, թուջե մտոցի հետ միասին	հատ	1	127.69	127.69
8	Շուկա	Հավաքովի ե/բ դիտահորի հատակի սալ Φ 1500	հատ	1	27.86	27.86
9	շուկա	բետոն դիտահորի հատակի համար B15	մ3	0.25	40.82	10.21
10	8-27	դիտահորի պատերի քսուկայինջրամեկուսացում բիտումով 2 անգամ	100 մ^2	0.05	84.13	4.21
11	16-261 շուկա	պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում Φ20մմ	գծմ	13.0	2.75	35.70
12	16-262 շուկա	պոլիպրոպիլենե ջրատար խողովակների տեղադրում Φ25մմ	գծմ	21.0	2.26	47.49
13	շուկա	ջերմամեկուսիչ փրփրապլաստե խողովակներ Φ40	գծմ	21.0	0.56	11.71
14	22-366 շուկա	պոլիպրոպիլենե եռաբաշխիչ Φ20 x25x 20	հատ	1	1.47	1.47
15	22-366 շուկա	պոլիպրոպիլենե եռաբաշխիչ Φ20 x20 x 20	հատ	2	1.47	2.93
16	22-366 շուկա	պոլիպրոպիլենե արմունկ Φ 25	հատ	2	1.49	2.99
17	22-366 շուկա	պոլիպրոպիլենե արմունկ Φ 20	հատ	2	1.45	2.89
18	16-134	պոլիպրոպիլենե փական Φ 25մմ	հատ	1	4.03	4.03
19	16-134	պոլիպրոպիլենե փական Φ 20մմ	հատ	1	3.92	3.92
20	շուկա	ճկուն խողովակ Φ 15 ,L-300մմ	հատ	2	0.42	0.84
21	16-184	լվացարանի ծորակ Φ15 /ռուսական/	հատ	1	8.12	8.12
22	շուկա	Ամրակցում Φ25	հատ	10	0.06	0.56
23	շուկա	Ամրակցում Φ20	հատ	18	0.04	0.75
24	22-365	անցում պողպատից պոլիպրոպիլենի Φ 25 x25	հատ	1	1.21	1.21
25	16-199	ջրաչափի տեղադրում Φ15մմ	հատ	1	16.80	16.80
26	շուկա	զտիչի տեղադրում Φ25	հատ	1	1.43	1.43
27	22-397	Միացում գոյություն ունեցող ցանցին Φ25	հատ	1	4.42	4.42
		Կոյուղի				
1	1-961	բնահողի մշակում ձեռքով	մ^3	8.1	2.39	19.34
2	1-968 1-1184	բնահողի հետլիցք ձեռքով տուփանումով	մ^3	8.1	2.15	17.41
3	23-1	խողովակների հիմնատակի կառուցում ավազով 100մմ	մ^3	1.35	4.30	5.80
4	16-34	պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում խրամուղում Φ110մմ	գծմ	50.0	1.91	95.52
5	17-16 շուկա	Լվացարանների մոն- տաժում /առանց արժեքի/	կոմպ	1	17.91	17.91
6	17-62 շուկա	Զուգարանակոնքի տեղադրում	կոմպ	1	32.24	32.24

7	23-42	Անցքի բացում պատերում 100x100 մմ լ=600մմ	հատ	2	1.50	3.01
		Ներքին լուսավորություն				
1	8-603-1	առաստաղի լյումինիսցենտային լուսատու 2x1,2 տիպի	100 հատ	0.04	704.07	28.16
2	8-603-1	առաստաղային լուսատու	100 հատ	0.04	773.72	30.95
3	8-612-2	պլաստմասե արկղ	հատ	1	10.37	10.37
4	8-525-2	ավտոմատ անջատիչ-220V,16A	հատ	1	3.54	3.54
5	8-525-2	ավտոմատ անջատիչ-220V,6A	հատ	1	3.88	3.88
6	8-591-2	երկստեղ միաբևեռ անջատիչ250Վ 6Ա	100 հատ	0.04	105.43	4.22
7	8-591-2	միատեղ միաբևեռ անջատիչ 250Վ 6Ա	100 հատ	0.04	95.81	3.83
8	10-975-8	Տեղադրման տուփ	100 հատ	0.18	117.27	21.11
9	10-975-8	բաժանարար տուփ	100 հատ	0.1	117.27	11.73
10	8-591-7	երկստեղ երկբևեռ վարդակ հողանցման հպակով 250Վ 10Ա	100 հատ	0.1	131.15	13.11
11	8-402-2	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՊՎ 2 x 2.5 մմ^2	100մ	1.50	47.37	71.06
12	8-402-2	Պղնձե հաղորդալարի անցկացում փակ եղանակով ՊՊՎ 3 x 2.5 մմ^2	100մ	0.50	70.63	35.32
		Ընդամենը				***5548.51***
		Շահույթ 11%				***610.34***
		Ընդամենը				***6158.84***
		ԱԱՀ 20%				***1231.77***
		Ընդամենը				***7390.61***

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-3

Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքների կատարման

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քա-նակ	Արժեքը հազ. դրամ միավորի	ամբողջը
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Եզրաքարի քանդում բետոնից	մ	568.00	0.935	531.08
2	Բազալտե թասակի քանդում	մ	12.0	3.17	38.04
3	Բազալտե աստիճանի քանդում	մ	12.00	0.86	10.32
	Տարածքի մաքրում				
1	2-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /գազոնների քանդում/ V=440*0,2=88մ3	մ^3	88.0	1.575	138.60
2	Բնահողի մշակում էքսկավ.,0,5մ3 բարձելով ինքնաթափին , 2-րդ կարգ	1000մ^3	0.088	496.74	43.71
3	Տեղափոխում 7 կմ	տն	123.2	1.75	215.60
4	2-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /գազոնների մեջ թափված բնահող/ V=2*0,6*40/2=24մ3	մ^3	24.0	1.575	37.80
5	Բնահողի մշակում էքսկավ.,0,5մ3 բարձելով ինքնաթափին , 2-րդ կարգ	1000մ^3	0.024	496.74	11.92
6	Տեղափոխում 7 կմ	տն	33.6	1.75	58.80
	Հարթակներ բետոնե սալիկներից S=1287,0 մ2				
1	Խճի նախաշերտի կառուցում 60մմ հաստ,	մ^3	77.22	8.265	638.22
2	Մանրահատիկ ավազի նախաշերտի կառուցում 70մմ հաստ,	մ^3	90.09	3.516	316.76
3	Բետոնե գունավոր սալիկների տեղադրում 6սմ հաստությամբ ավազի վրա	100մ2	12.87	589.28	7584.03
4	Բետոնե եզրաքարի տեղադրում 200*80մմ	մ	657.4	5.42	3563.11
	Խաղահրապարակի կառուցում կարմիր պեմզայից S=160,0 մ2				0.00
1	Խճի նախաշերտի կառուցում 50մմ հաստ, V=160*5սմ=8,0մ3	մ^3	8.0	8.265	66.12

2	Ավազի նախաշերտի կառուցում 30մմ հաստ, V=160*3սմ=4,8մ3	մ^3	4.80	3.516	16.88
3	Աղացած պեմզայի (հաստ.-50մմ) ծածկույթի կառուցում 5սմ հաստ, V=160*5սմ=8,0մ3	մ^3	8.00	4.19	33.52
	Բազալտե աստիճաններ				
1	Խճի նախաշերտի կառուցում	մ^3	1.60	8.265	13.22
2	Բետոնե նախաշերտ 100մմ հաստությամբ	մ^3	2.45	38.18	93.54
3	Բազալտե աստիճանի տեղադրում 300*150	մ	48.00	9.77	468.96
4	Պատերի երեսպատում սրբատաշ բազալտից S=0,30*8=2,4մ2+0,6*2*2=4,8մ2	մ^2	4.80	19.87	95.38
					0.00
5	Բազալտե թասակի տեղադրում պատերի վրա առանց/ արժեքի 60սմ լայն,	մ	9.40	16.6	156.04
	Կանաչապատում –Սիզամարգեր				
1	Սիզամարգերի փխրեցում առանց հողի ավելացման - 18,3*0,8=14,64	100մ^2	15.05	19.06	286.85
	Ընդամենը				14418.51
	Շահույթ	11%			1586.04
	Ընդամենը				16004.54
	ԱԱՀ	20%			3200.9
	Ընդամենը				19205.45

* Կապալառուն ըստ չափաբաժինների աշխատանքները կատարում է ՀՀ Լոռու մարզի Արջուտ, Մեղվահովիտ, Վանաձոր համայնքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձնպետ. հիմնարկ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
ՀՎՀՀ 06933045
Հ/Հ 2050222017141001
«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

Հ.Պողոսյան

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
2	Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017 թվականի օգոստոսի 31
7	Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017 թվականի օգոստոսի 31
8	Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017 թվականի դեկտեմբերի 1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. հաշվարկ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
ՀՎՀՀ 06933045
Հ/Հ 2050222017141001
«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

Հ.Պողոսյան

Հավելված N 3
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Աշխատանքի										
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45221142	Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ	4710389	4710389	4710389	4710389	4710389	4710389	4710389	4710389
7	45611300	Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքներ	5143865	5143865	5143865	5143865	5143865	5143865	5143865	5143865
8	45611300	Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքներ	13366993	13366993	13366993	13366993	13366993	13366993	13366993	13366993

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. հաշվարկ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
ՀՎՀՀ 06933045
Հ/Հ 2050222017141001
«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

Հ.Պողոսյան

Կ.Տ.

Հավելված թիվ 4
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Երաշխիքային ժամկետը
2	Արջուտ համայնքի փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ	2 տարի
7	Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքներ	2 տարի
8	Վանաձորի մոր և մանկան զբոսայգու վերանորոգման աշխատանքներ	2 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. հաշվակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Այպոշին» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52
ՀՎՀՀ 06933045
Հ/Հ 2050222017141001
«Ինեկոբանկ» Վանաձորի մ/ճ

Հ.Պողոսյան

Կ.Տ.

Հավելված թիվ 5
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» _____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5.1
«27» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/05-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Լոռու մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն